

## ՎԵՐՋԵՐԳԱՆՑ

(«Անի» պոեմից)

### 1.

Իմ Ալսուրեանի այն ափին ընկած՝  
Անին վիրաւոր եղնիկ է կրկին,  
Զեն թողում անդամ լեզու տայ վէրքին:  
Այս ափին ձագն է, այն ափին մայրըս՝ Անին վիրաւոր,  
Զի կարող լիզել կաթող արիւնը վէրքի դարաւոր,  
Այս ափին ձագն է բառաչում, լալիս, ինչո՞ւ չես գալիս,  
Այն ափին մայրս է՝ ուղում է դընել դըլուխն այս ափին,—  
Բայց գարեր կանգնած որսորդը զլինին՝ գեռ ահ է տալիս,  
Լուսնի մահիկը՝ որպէս իր արնոտ աղեղը ձեռքին,  
Ոչ նետն է հանում եղնիկիս կրծքից, ոչ խըրում է խոր,  
Ոչ սըլանում է, ոչ կեանք է տալիս մօրս վիրաւոր...

### 2.

Դեռ մի կարօտ ունեմ անյագ՝ հասնեմ Անի ու նոր մեռնեմ,  
Բանամ ճամբիս դրները փակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,  
Բալասանեմ իր բաց վէրքին, կապեմ վէրքերն իր անհամար,  
Վերածնեմ գերեզմանից — փրկեմ Անին՝ կարօտ առնեմ,  
Օրօցք դընեմ իրձերն Հայոց, Հայոց յոյսերն օրօրելով,  
Որպէս որդուն իմ երկւորեակ՝ երկնեմ Անին՝ կեանքն օրօրելով.  
Ախուրեանի ջըրերի պէս մօրս փէշերն համբուրելով  
Լցւած կեանքով հաղարազանկ՝ զրկեմ Անին՝ վիրածնեմ:  
Կրծքիս սեղեմ Անիս աւեր, բուերի տեղ սոխակ դառնամ,  
Դառած երդ ու վարդի քաղաք՝ երկեմ Անին ու նոր մեռնեմ:  
Թաղեմ սիրտը իմ Անիում, իմ վլրիմն էլ գարձնեմ պահակ  
Պարիսպների զըրացի տակ զօրքեմ Անին, վեր սաւառնեմ,  
Անցնեմ՝ գարեր ոտք չըդըրած հող ու հանգով իմ պապերի  
Հայոց հողի համբոյրի տակ՝ հերկեմ Անին, հունձի յառնեմ,

Վանայ ծովի ու Վանի հետ ու Ջարսի հետ ու Մասիսի՝  
իմ Սեւանի լոյսերի տակ զուղեմ Անին՝ օջախ վառեմ,  
Ծաղկեցընեմ շիրիմն անդամն արքայաշուք իմ պապերի,  
Թաղեմ յուշերն էլ մաներդակ՝ փրկեմ Անին ու նոր մեռնեմ:  
Աւեր թողնեմ միայն քոշը թուրք չարայուշ բռնակալի,  
Գլխին Հայոց արեւաթագ ոսկեմ Անին, բերդն համբուրեմ,  
Հաղարազանդ զարթեցընեմ հազարամեայ իր խոր քընից՝  
Արագածի պէս անխորտակ բուրդեմ Անին, վեր պարբսպեմ:  
Կեր փիւնիկեմ հաղար ու մի տաճարներով իր աւերալ,  
Մայր տաճարի գմբէթի տակ խնկեմ Անին, կեանք բուրուտեմ:  
Թաղաղընեմ սրտիս թագով մանուկ Գաղիկ թագաւորին,—  
Հաղար ու մի իր զանգերով՝ զանգեմ Անին, վեր զօղանչեմ:  
Մայրաքաղաք Երեւանին Անին զարնեմ հայրաքաղաք:  
Հաղարասիւն պալատներով վեմեմ Անին, կեանքի կոչեմ:  
Վերաշնեմ շիրմի մատուռն ըսպարապես Պահլաւունու,  
Թաղաւորեմ ես գէթ մի դար, ճեմեմ Անին ու նոր ննջեմ:  
Բանտից հանեմ մեծ Հայաստանն՝ այս ազատած փոքրին խառնեմ,  
Բերեմ ըսփիւռքն, ազգն հաւաքեմ հայկեմ Անին ու նոր մեռնեմ,  
Հայոց թագի շափաղն հասնի Վանայ ծովի մութ վահանին:  
Դրկելով հողն իմ բովանդակ, թագեմ Անին, թաղաւորեմ:  
Հաղար տարւայ կարօտ ունի իմ երազը հաղարաթեւ՝  
Ա՛խ, թէկուզ լուռ, գեռ աւերակ տեսնեմ Անին՝ զարթիր կանչեմ,  
Վերածընեմ աւերանքից Ախուրեանիս օրօրի տակ,  
Որպէս որդուն իմ երկւորեակ՝ զրկեմ Անին ու նոր մեռնեմ:  
Որպէս ոսկի վազւայ դուշակ, որպէս Մասիսն իմ անուշակ  
Գլխին Հայոց մի գըրօշակ տեսնեմ Անին... ու չմեռնեմ: